նակ, վանականներու խնդրանքով յօրինած է Ս. Տեղեաց Աղօթագիրք մը, անձամբ երթալով տնօրինական Ս. Տեղերը։ Այդ յիշատակարանը նոյնութեամբ հոս կ'ընդօրինակենք. «Ասացաւ եւ գրեցաւ սբ. եւ ածային տառս այս որ է մաղթանք ի բոլոր ամ. սբ. տնօրինականքն քս.ի Այ. մերոյ որ յերսղմ. ի Վարդան վարդապետէ. ի թուականութեանս Հայոց ՉՀ (= 1321) ի հայր. (Կոստանդնի Բ.) և ի թագ. Լեւոնի որդւոյ Աւշնի, և յառաջնորդութեանս երսղմի. տր. Վարդանայ. . . ։ Արդ գրեցաւ սա ի վանքն Դաղարու որ է Մշու սբ. առաքեալքն. ընդ հովանեաւ սբ. ածածնին. եւ սբ. Առաքելոց եւ սբ. Դաւիթ անյաղթ փիլիսոփային եւ այլոց սրբոցն որ աստ կան հաւաքեալ, ձեռամբ մեղսամած և անարհեստ գրչի Գրիգորի։ Արդ ես անիմաստս գնացի ի սբ. Յովհաննէս որ կայ յերկրին Տարօնոյ. անդ ուր շիշ իւղոյն է զոր բերեալ Թադէոս առաքեալն եւ եդ անդ որ յետոյ շինեցաւ վանք հռչակաւոր յանուն սբ. Յովհաննու Մկրտչին. գնացի ես անդ և կացի սակաւ մի և գտի զայս օրինակն յայնտեղն որ ի վաղուց հետէ բերած էր յերուսաղեմայ յայն վանքն. ապա ես մեղաւորս դեռ է գնացեր յերուսաղեմայ, տեսայ զայս, խիստ ուրախացայ, եւ առի զօրինակն եւ բերի ի սբ. Առաքեալք ըղձիւ եւ փափաքանօք գրեցի. . . աղաչեմ յիշեսջիք զանարժան Գրիգորս եւ զծնողս իմ զՍտ. քահանայն, . . . գրեցաւ ի թվ. Հայոց ՌՀ (= 1621), յորում ամի ի սբ. քաղաքն Եէմ. ի բեթղահէմ զսբ. ծնունդն նորոգեցին զՀայոց վիճակն ձեռամբ Գրի. արհիեպսին. . . .»։

Այս ձեռագիրին գրիչը Գրիգոր Նչեցին իր օրինակին մէջ տեսնելով Վարդան վրդ.ի յիշատակարանը, ընդօրինակած է զայն, ինչպէս վերը տեսանք, և իր ընդօրինակութեան մասին կուտայ տեղեկութիւններ։ Նչեցիին այս օրինակը կը մնայ Ս. Յակոբի վանքին մէջ, (ՄՁ. Թ. 939)։ Վարդան վրդ. ինչպէս կ'երևի, իր գրած աղօթքներուն մէջ գտնուած ակնարկութիւններէն, 60 տարեկանին այցելած է Ս. Տեղերը եւ գրի առած է նոյն տողերը։

Սոյն Վարդան վրդ.ի Աղօթագիրքը առաջին անգամ կը տպագրուի 1734 ին Պոլիս, Երուսաղէմի Գրիգոր և Պոլսի Յովհաննէս Կոլոտ պատրիարքներու օրով, և Վարդանի անունը կը յիշուի երանելոյն Վարդանայ վարդապետի խորագրով. նոյն աղօ-